

հետազոտությունն է, ինչը, համադրելով գեղձի գերձայնային հետազոտության արդյունքների հետ, հնարավորություն է տալիս ժամանակին հայտնաբերել և շտկել խնդիրը, դրանով իսկ նպաստել վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստի բարձր ռիսկի խմբում դեռահասի չընդգրկվելու համար:

Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ կցանկանայինք լսել ատենախոսի պատասխանները հետևյալ հարցերին.

1. Ցածր ձվարանային պահուստն արդյո՞ք անդրադառնում է կյանքի որակի վրա:
2. Ձվարանային պահուստի գնահատման ցուցանիշները գնահատվում և մեկնաբանվում են վերարտադրողական տարիքում: Ինչո՞վ եք հիմնավորում դեռահասների մոտ ձվարանային պահուստի գնահատման կանխատեսիչ նշանակությունը հետագա մանկածնման տարիքի համար:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են սեղմագրում:

Եզրակացություն: Հասմիկ Հովհաննեսի Բարեղամյանի «Ձվարանային պահուստը որպես դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական ներուժի գնահատման նոր գործիք» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից բժշկության կարևոր խնդիրներից մեկին, հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք: Իր բովանդակությամբ, ծավալով, նյութի մշակման և վերլուծության մակարդակով, ստացված արդյունքներով և գիտական նշանակությամբ այն համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդն արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ԺԴ.00.01՝ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է «Մարգարյան ծննդատուն» Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի 2025թ. ապրիլի 29-ի նիստում (արձանագրություն թիվ 3), որին ներկա էին գիտական խորհրդի 16 անդամներից 12՝ բ.գ.դ. պրոֆեսոր Գ.Գ. Օկունը (ԺԴ.00.01), բ.գ.դ. Ա.Կ.